ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/47 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ապրանքների (ատեստատներ, դիպլոմներ, գովասանագրեր-պատվոգրեր, վկայականներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 08.05.2024թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Արշակյան
Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Բարսեղյան
Սուսաննա Ազատյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Էն ընդ էն գրուպ» ՍՊԸ	lasprintllc@gmail.com manukyanscompany@gmail.com
2	«Ոսկան երևանցի» ՍՊԸ	info@veprint.am
3	« Լաս պրինտ »ՍՊԸ	lasprintllc@gmail.com
4	«Ֆոտբոլային դարբնոց» ՍՊԸ	-

3. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3. 1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Հ/Ր	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները							
		«Էն ընդ էն գրուպ» ՍՊԸ		«Ոսկան երևանցի» ՍՊԸ		«Լաս պրինտ» ՍՊԸ		«Ֆոտբոլային դարբնոց» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ							
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	1440000	790000	948000	900000	1080000	1116000	1339200	55000000	66000000

2	3840000	384000	4608000	2500000	3000000	1850000	2220000	55000000	66000000
3	5833100	5833100	6999720	3800000	4560000	2760000	3312000	55000000	66000000
4	900000	900000	1080000	600000	720000	590000	708000	55000000	66000000

5. Տվյալներ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 «Էն ընդ էն գրուպ» և «Լաս պրինտ» ՍՊԸ-երի կողմից ներկայացված հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի՝ «Էն ընդ էն գրուպ» և «Լաս պրինտ» ՍՊԸ-երը հայտով ներկայացրած Հավելված 1 Դիմում-հայտարարությամբ հավաստել են, որ բացակայում է տվյալ ընթացակարգի հրավերով սահմանված, վերջիններիս կողմից հիմնադրված կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, սակայն ուսումնասիրելով նշված կազմակերպությունների կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը արձանագրվել է ընկերությունների հիմնադիրների անուն/ազգանունների որոշակի համընկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը և սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.22 կետը, հանձնաժողովը որոշեց կասեցնել գնահատման գործընթացը և դիմել իրավասու մարմին, մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ստուգելու ընկերությունների հիմնադիրների վերաբերյալ ներկայացված տվյալների իսկությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.4 Հանձնաժողովի նիստը շարունակել ՀՀ արդարադատության նախարարությունից պատասխանը նստանալուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 313 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 21.05.2024թ. ժամը 12:00-ին

6. Իրավասու մարմնի տրամադրած եզրակացության մասին.

6.1 2024 թ մայիսի 15-ին ՀՀ արդարադատության նախարարությունից ստացվել է «Էն ընդ էն գրուպ» և «Լաս պրինտ» ՍՊԸ-երի հիմնադիրների վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի երկու ՍՊԸ-ների հիմնադիր է հանդիսանում նույն անձը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը՝ մերժել «Էն ընդ էն գրուպ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով և «Լաս պրինտ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ նույն անձի կողմից հիմնադրված կազմակերպությունների միևնույն գնման գործընթացին միաժամանակյա մասնակցության հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել «Ոսկան Երևանցի» ՍՊԸ- ի հայտը 1-4 չափաբաժիններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.3 «Ֆոտբոլային դարբնոց» ՍՊԸ -ի հայտը՝ 1-4 չափաբաժիններով և «Էն ընդ էն գրուպ» ՍՊԸ-ի հայտերը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով մերժվել է համակարգի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած, պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.2 Հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ հոդվածի 19-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Էն ընդ էն գրուպ» և «Լաս պրինտ» ՍՊԸ-երին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Աշոտ Արշակյան /նախագահ/

_____ Անահիտ Բարսեղյան

_____ Սուսաննա Ազատյան

_____ Լիանա Խառատյան /քարտուղար/